Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/50 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 10.06.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/50» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը նախագահողի մասին

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահեց հանձնաժողովի անդամ Ա. Հարությունյանը՝ համաձայն գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի /այսուհետ՝ Կարգ/ :

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/50» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/50» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	ԱՁ Վահրամ Կնյազյան
2	«Բագարանի Բարիք» ՓԲԸ
3	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

4.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի, 9-րդ բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
ԱՁ Վահրամ Կնյազյան	303960	119400		119400
«Բագարանի Բարիք» ՓԲԸ		150000		150000
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ		255000		255000

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի, 11-րդ բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
ԱՁ Վահրամ Կնյազյան	298284	79600		79600
«Բագարանի Բարիք» ՓԲԸ		150000		150000
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ		225000		225000

4.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Վահրամ Կնյազյան	Բավարար
«Բագարանի Բարիք» ՓԲԸ	Բավարար
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. Ընթացակարգի 1- ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/50» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

7. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

8. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 7-րդ կետում նշված եզրակացության գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:45-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Անդամներ՝ ---------- Ռ. Աբրահամյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան